

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԵԱՐԻԱ

Տարեկան 12 փր.
Տեղամասայ 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
2 քիւ մեկ ծրարով
Տարեկան 14 փր.
Տեղամասայ 7 փր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Տեղամասայ 1.50 »

ԿԱՆԻՏ

Տանուցման տղը
20 սանթիմ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARN A (Bulgarie)


Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք ևս
չեն տրուիր



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՆԱԿԸ

Այժմ երբ միութեան խնդիրը թէ՛ յիշատակման կուսակցութեանց եւ թէ՛ ժողովրդեան խաւերուն մէջ կը յուզուի, մենք անոր ամեն կողմերը լաւ լուսարանուած եւ հետեւաբար ապագայ միութիւնը հաստատուն հիմք ունէր վրայ դրուած տեսնելու բաղձանքով կը բանաճնք սրտեակ մը, ուր պիտի հիւրընկալենք ազգային միասնական գրուած լուրջ եւ կանխակալ նկատմաներէ զերծ յօգուածներ:

ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժամանակէ մը հետէ Միութեան հարց մը դարձեալ սկսած է յուզուիլ: Դարձեալ արտասահմանեան մեր ամեն թերթերն այդ հարցի նկատմամբ յօգուածներով, նամակներով, կոչերով իրենց սրտնակներ կը լեցնեն, առանց բնականօրէն որոշ գաղափար մը ընծայելու: Ամեն ոք իր հայեացակէտով իրաւունք ունենալ կը կարծէ կամ կը կեղծէ. . . Սակայն ասի աղմուկը, որուն ուսմանք ներդաշնակութեան, համերաշխութեան մը քաղցրահնչիկ միջոցներ գոյնը տալ կուզեն, այլ եւս չէ կարող խափանել հայրենեաց արիւնեաներէ հոգին վրայ անոք եւ անօգնական թափառող մեր որդիները եւ այրիները լաց ու կոծը եւ սրախողխող մեռնողներու աղեկը տուր հանչիւնը: Այդ ձայնը միայն, որուն ետեմ ճշմարիտ հայրենասէրը ուկն կը դնէ, կուգայ լեռներէ եւ սարերէ անցնելով, մեզ արտասահմանի հայերուս յիշեցնել մեր ճիշդ պարտականութիւնը:

Չենք կրնար ընդունիլ որ մեր արդի կացութեան մէջ կուսակցութիւնները անհրաժեշտ են մեզ համար: Ամէն քիչ թէ շատ զարգացեալ ոք կը մտնէ թէ կուսակցութիւններ իրենց գաղափարային պայքարներով ազգի մը յառաջդիմութեան պայմաններէն են. բայց այդ միայն կազմակերպիչ կառավարութիւն ունեցող ազատ, անկախ ազգերու համար է: Մենք այժմ օտար լուծի տակ հեծող

բազմաշրջան ժողովուրդ մը ենք. մեր Միակ նպատակը կամ պէտք է ըլլայ այդ լուծը թօթափել, եւ առ այս պարտինք միագոծող եւ միահամուռ կուսիչ մեր ազատութիւնը կապտող թշնամուոյն դէմ: Այս կէտը այնքան պարզ է որ ամենէն միամիտներու իսկ դիւրամբ ընկնի է:

Այդ, երբ հայ ազգը վերջապէս իր ինքն ջուռէն սթափելով կը միտէր իր գոյութեան սուրբ կուսին համար պատրաստուիլ, երբ մէկ երկու ասանակ տարիներ տառաջ միմ հայրենասէրներու ցանցած սերմերէ հասցնող բուսաբար դուրսը մօտայում կը թուէր, յաւակնատութեան անբուխ շփոտէն վարակուած կարգ մը անողջախոհ եւ անշուք անձեր՝ իրենց գործիք ընելով նորահաս, անփորձ եւ միամիտ պատանիներ կելնեն այլ եւ այլ անուններու տակ կուսակցութիւններ կազմել, գրեթէ ինչպէս կը կազմեն շահասիրական ընկերակցութիւններ, եւ իրենց անխորհուրդ արարքներով կը վիժեցնեն դեռ սողմնային վիճակի մէջ գտնուող գործ մը: Ազգին ամեն միմ մեծամասնութիւնը ոչ կը գործակցէր, ոչ կը համակրէր այդ ինքնակոչներուն, որոց անխորհուրդ ընթացք ու պատրանքը պատճառ եղան այն դառնալէտ պատահարներուն որոնք մեր ազգի գոյութիւնը դրին այն վտանգին մէջ ուր կ'ը գտնուի այժմ:

Կուսակցութիւններու գոյութիւնը կ'առթին ներքին խռիւրներու նկատմամբ կարծեաց տարբերութիւններ անկախ կառավարական կազմակերպութիւն ունեցող ազգերու մէջ: Անոնք կը վիճին, կը պայքարին իրարու հետ թէ՛ ի՞նչ պէս պիտի կառավարուի ժողովուրդը, իրենց վեհապետը ի՞նչ իրաւունքներ կրնայ վայելիլ, միակ պետութիւնը թէ հասարակագիտութիւնը աւելի փրկարար է ժողովուրդին համար եւն. եւն. Մենք դեռ հոգի ենք այդ վիճակէն. մեզ համար կուսակցութիւններ ունենալն կը նշանակէ եղբորաւ կան կուս մղել միայն. եւ արդէն մեր մէջ գոյութիւն ունեցող հընչակեան, դաշնակցական եւն.ական

խումբերու ըրածն ալ ուրիշ բան չէ եղած ցարդ: Իսկ Միութիւնը մեզ համար ազգին ուժեղութիւնը ցուցաբերող կրնայ ըլլալ միայն, եւ միայն ասի տեսն անկախութիւնները ընել կարելի է առանց յուսախաբանութեան:

Ա. Ե. Մ.

ԵՐԻՈՒԹԵԱՆ ՀԱՅԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՋ

Մեր ընթերցողք անշուշտ կ'ընեն իրաւունքի Զ. տարւոյ 91 թուով (19 Դեկտ. 1901) հրատակուած «Ժէօն Թուրքերու յայտարարութիւնը» զոր ստորագրած էր իսթանբուլի վեհապետը, նախկին նախարար, պետական խորհրդայնագրաւ եւ վարի: Այդ ակնաւորութեամբ, ըստ Մարքեմի եւ ուրիշ եւրոպական թերթերու յայտարարութեանց, Ժէօն Թուրքերու բոլոր պետերուն կողմէ կը խօսէր եւ անկողմ փափաք կը յայտնէր Պէրլինի դաշնագրին շնորհ, 61րդ եւ 62րդ յօդուածներուն գործադրութեանը, ու կը ճանչնար Հայոց եւ Մակեդոնացւոց իրաւունքը, զի համագումր կը յայտնէր թէ հակառակ պարագային Հայաստանը եւ թէ Մակեդոնիան բոլորովին պիտի կորսուին. ու կը հրաւիրէր պետութիւնները դեպքանախօրով մը կազմելով, Թուրքիոյ մէջ բարեկարգումներ ներմուծել, ըստ դաշնագրի ներքին, «խնդրոյ տուարկայ եղող ազգաբնակչութիւններու կարծիքն առնելէ յետոյ»: Ու կը յաւելուր. «Աւելորդ է ըսել թէ միմ ձեռք առնուելիք այդ միջոցներէն, զոր կացութիւնը պարտաւորիչ կը դարձնէ, այն է որ Եւրոպական Յանձնաժողով մը ստանձնէ, Բ. Դրան հետ գործակցութեամբ, երկրին եւեմուտքին վարչութիւնը, մինչեւ որ մտցուելիք նոր կազմակերպութիւնը աւարտի»:

Մենք այդ յայտարարութիւնը հրատարակելէ յետոյ, Ժէօն Թուրքերու տարբեր մէկ խմբակին ալ գաղափարը մեր ընթերցողաց ծանօթացուցած ըլլալու համար, աւելորդ չենք համարեր Մէլլիքի վերջին թիւին մէջ տեսնուած հետեւեալ խմբագրականը թարգմա-

նարար գետեղել հոս: Այս անգամ զրոյքը խալիլ կանէմն է, որ Թուրքիոյ անդրանիկ Երեսփոխանական Ժողովոյն անդամ էր, եւ որ կը պատասխանէ անաղղակի կերպով ու փրփրած իսթանբուլի վեհապետ յիշեալ յայտարարութեան:

Այս թերթին մէջ եւրոպական հակալիւթ զօնքոյ ինչո՞ւ հակառակ ենք, նոյնիսկ այն ատեն ուր—քիչ հաւանական եւ թաղրութիւն— մեզ կեղեքող գէշ կառավարութեան մեզ փրկէր ան: Նախ դիտել պիտի տանք որ այս վիճաբանութիւնը բոլորովին տեսական է. Նկատելով որ Մահմուտ Բ. Ի արապական թուրքի վերաւայեան Եւրոպայի Թուրքիոյ ներքին դարձերուն կը միջամտէ, մերթ հաւաքաբէս ու մարտ առանձնապէս, բայց երբեք Սոմ. կայսրութեան աղէկութեանց հակալիւթ մասին մեզ եղած աւարկութեան կը պատասխանենք, այդ հակալիւթն ինչո՞ւ տալէ աւելի, որ դորձնապէս գոյութիւն ունի, ժողովրդային իրաւունքի ու միջազգային իրաւունքի սկզբունք մը պաշտպանելու համար է միայն, որ սա առանձին մէջ յատկօրէն սահմանուած է. անոր անհրաժեշտ տանտէր է իր տանը մէջ:

Չենք ընդունիր, նաեւ, ստորին ցեղերու տեսութիւնը, սիրելի պետական անհակցուած մարդուն որ եղան հանգուցեալ ժիւլ ֆէռլին, ինչպէս ատոր հետեւողներուն, ու հետեւապէս կը մերժենք օտար ամէն խնամակալութիւն, ըլլայ իսկ բարեբար, ինչ որ պարագան չէ, փութանք յայտարարելու, հակալիւթ այն յաւելուածին համար որուն մեզ ձեռքարկել կը յաւակնին:

Արդարեւ, այդ հակալիւթն յայտնի կամ քողարկուած կերպով գործադրութեանէն ի վեր, արդիւնքները աղէտաբեր եղան: Այդ հակալիւթի, որուն տեսանկիւ բարիքը կը կայանար գոնէ Թուրք կառավարութեան ցոյց տալու քանի մը բարեկարգութիւններ, զոր յետոյ կը քաջալերէին չիբականացնելու, Թուրքիան իր մէկ քանի ստացուածքներէն կապտելու պատրուակի ծառայեց:

Միւս կողմէն, եւրոպական հակալիւթը կրէտէն խաղաղեց միմ ու հող խռովութեան նոյն սերմերը չենք նշմարեր (*), Լիւրանացիներու իրենց առանձնաշնորհութիւնները վերագրածուց:

(*)—Բնաւ:

միթէ (**) . տնտեսական հակակշիռը Օսմ. կայսրութեան մէջ ընդարձակ չահագործումի մը չի փոխուեցա՞ւ . միթէ , որուն երկիրը , կառավարութեան մեղսակցութեամբը , կանոնաւորապէս կը յապաւուրէ :

Անոր անձկութենէն օգուտ չեն քաղեր վաշխառական սակերով աւոր դրամ փոխ տալու համար ու նոր երաշխաւորութիւններ անկէ խելու համար , երբեմն ծխախոտի ռեմիս , երբեմն լուցկիներու ներ :

Սուլթանը կը տանի այդ հակակշիռը , ինչպէս կը տանի բոլոր միջամտութիւնները ու բոլոր պզտիկութիւնները , անկածանցով ու համակերպութեամբ զոր ցոյց կուտայ մեծ ու պրոպիլամէն անոնց , որոնցմէ անձնական ծառայութիւն մը կը սպասէ : Իր շահը , արդարեւ , ամէն բան կը գլէ , թէ՛ հայրենիքի թէ՛ կրօնքի շահերը : Մեր դժբաղդ հղբայրները Հայերը որոնք այս հակակշիռը կը պահանջեն , մեզ չափ լաւ գիտեն թէ իրենց համար որ եւ է կերպով օգտակար պիտի չըլլայ ան . Պերիինի գաշնագրին մէջ միայն 61րդ յօդուածը արձանագրած ըլլալուն համար , Եւրոպան մեծագոյն վաճառներու զանոնք ենթարկեց . ու չափազանց յանդուգն երեւնալ չէ ըսելը թէ խնդրոյ առարկայ յօդուածը մեծ բաժին մը ունեցաւ կոտորածներու կազմակերպութեան համար , որուն անոնք տխուր զոհերը եղան : Ինչպէ՞ս եղաւ այս բանը . վասն զի Եւրոպան միմիայն բոլորովին խաբէական կացութիւն մը իրենց տալ ուզեց . դաշնագրին պուլկարներուն վերաբերող յօդուածներուն գործադրութեանը հսկեց . ինչո՞ւ . դանցը բնական Հայերը ի թէ , սովորութեանը համեմատ , կանխակալ դիտումէ զուրկ էր : Կրէտէի ինքնավարութիւն կը պարզեւէ առանց անոր ի նպատակ յօդուած մը իր ատենագրութեանցը . մէջ անցուցած ըլլալու , ինչո՞ւ նոյնը չըրաւ Հայերուն համար : Պատճառը սա է թէ սթէ ամէն մարդ թուրքիոյ մէջ հանգստութիւն ու խաղաղութիւն վայելէր , Եւրոպան ալ Օսմ. կայսրութիւնը պիտի չի կրնար ակարացնել ոչ ալ աւոր գործերուն մէջ խառնուիլ . ահա նպատակը որուն հետամուտ է շատ երկար ատենէ ի վեր , ու զոր կերպագործէ քիչ քիչ սուլթաններու մեղսակցութեամբը : Մնաց որ , եւրոպական հակակշիռը Օսմ. կայսրութեան մէջ կէտին վրայ ինչպէ՞ս պիտի գործադրուէր , երբ գիտենք թէ պետութեանց միջեւ համաձայնութիւն չկայ ու մին հիւ . կը պոսայ , մինչ միւսը տի՛ կը գանչէ :

Նաեւ լաւ գիտուի թէ երիտասարդ թուրքերու ոչ ալ Դրան ընդդիմադրութիւնը չէ որ պետութիւնները արդիւնք Հայերուն ի նպատակ Յըդ յօդուածին գործադրութեանը վրայ խորհելու : Եթէ զայն չընեն , վասն զի ան իրենց ծրագիրներուն մասը չէր կազմեր կամ խնդրոյ վրայ համաձայն չէին : Նոյնպէս եթէ բարենորոգումներու անմիջական գործադրութիւնը պահանջելու համար կոտորածներէ վերջ չի միջամտեցին—ու այն ատենն էր միջամտելու միակ պարագան—դատաւար սա էր թէ Հայերուն շնորհիւ չիք պաշտպանութեան ինչպէս մօրդասպաններու տրուելիք պատուհասի մասին տարակարծիք կը գտնուէին : Անիրաւ ենք ուրեմն պետութեանց նպատակը կասկածելի ցոյց տալու ու անոնց հակակշիռն ազդուութեան տարակուսելու :

(**)—Այո՛ , ազատեցան Տիւրքիներու եւ թուրք զինուորներու կոտորածէն , ու պաշտօնէից կեդրեւմէն :

Խմբ. Իրաւունքի

Հայերը կրնային կարծել թէ գուցէ մենք հակառակող ենք իրենց ծրագիրներու յաջողութեանը . բայց բնաւ երբէք : Ահա 23 տարիէ ի վեր անյաջողութեամբ անոնց իրագործումին կը հետամտին , հաւանական է թէ եթէ բովանդակ կայսրութեան կիրարկելի ընդհանուր բարենորոգումներ պահանջելու համար մեզ միանային , այսօր նոյն կէտին վրայ պիտի չը մնային , ինչպէս նաեւ մենք ալ , վասն զի ընդհանրապէս կողմէն 1876ի սահմանադրութիւնը պահանջեցինք , մեր պահանջներու յաջողութիւնը միութեամբ ու համաձայնութեամբ միայն կարելի ըլլալով : Իբր քաղաքական կուսակցութիւն , հայերուն հետ նոյն գրոշին ներքեւ կը գտնուինք ? ու մեզ կը թուի թէ ընդհանուր գործունէութեան մը համար ուժերնիս միացնելու նոր պատճառ մըն է այդ , որ ամէնուն կարծիքով աւելի ազդու պիտի ըլլար : Ոչ մէկու համար զազանք մըն է թէ Ապտուլ-Համիտ շատ գոհ է երիտասարդ թուրքերու մեջ տիրող բաժանումէն ու հայերուն հետ համաձայնութեան չգոյութեանէն : Նմանապէս ձեռքի տակէ Ալպանիացիներու անշատիչ ձգտումները կը քաջալերէ , ու յաջողած է իրեն ծառայող զաւորանի գործակալներու միջոցաւ , անհատական խնդիրներ գործելու , այնպէս որ ամէն մարդ իր կողմէն կաշխատի անշատ կերպով գործելու , բան մը որ Սուլթանին սիրտը կը հրճուեցնէ , որ նոյն նպատակին համադրով բոլոր կուսակցութեանց մէջ ընդհանուր գործունէութենէն միայն կահաբեկի : Կարծես իրապէս Եւրոպա եկած ըլլայինք մեր բաժանումները ու ակարութիւնները Եւրոպայի ցոյց տալու համար : Պէտք չէ՞ որ համաձայնէինք ու շուտով միանայինք հասարակաց թշնամիին զէմ փոխանակ մեր ուժերը ցանցնելու վերջը վերջը բանի մը չի հասնելու համար : Բնաւ ճակատամարտ մղուած չէ , ոչ ալ յաղթանակ տարուած է բաժնուած , ցիր ու ցան , անկարգապահ խումբերով : Դժբաղդօրէն անհատական խնդիրները յաճախ սկզբունքի խնդիրներէն , նոյն իսկ ընդհանուր շահերէ առաջ կանցնին : Եւ ահա ինչպէս ամէնքնիս ալ անկարողութեան մատնուած ենք Սուլթանին սաղրամքներով որ մեր շարքերու մէջ անմիջական ձգտու միջոցը գտած է : Զարգացած մտքեր եւ ազնիւ սրտեր ինչպէս պիտի չի հասկնային թէ կուսակցութեան փոխելու է : Նախ հայրենիքի աղէկութիւնը նպատակ ունեցող ընդհանուր ծրագրի մը վրայ համաձայնելու սկզբունք , ու յետոյ մեզ բաժնող միւս երկրորդական խնդիրներուն վրայ պիտի վիճինք : Եւ մանաւանդ պետութեանց չի նմանինք որոնք կանանչ սեղանին շուրջը կատարելապէս կը համաձայնին ու իրենց համաձայնութիւնը կը ճշգրտ հանդիսաւոր յօդուածներու մէջ զոր ամէնքը զատ զատ զրօնը որոշած են : Եւրոպական հակակշիռը այս միայն կարող է ըլլալ , ահա թէ ինչու զայն չենք ուզեր :

ԿԸ ՓՆՏՈՒԻ

1896ի գաղթականութեան ժամանակէն ի վեր անյայտացող Գասըմ Փաշայի Կարապետ Պ. Գալֆեանի ուր գտնուիլը գիտցող ազգայինք թող հաճին խմբագրութեան իմացնել : Յիշեալը Երկայնահասակ , թխաղէմ , սեւ աչեայ երկաթագործ մըն է , որ 3 տարի առաջ Աթէնք կը գտնուի եղեր :

ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

ԱՌ ՈՐ ԱՆԿ Է

Շ . Ի 381 «Ազգ. քրոնիք»ի բաժնին մէջ , կարգացինք թէ վառնաի գաշնակցական երիտասարդներ կոկիկ ընթերցարան մը բացած են :

Մենք առիթը ունենալով այցելել այդ բնակարաններ , զարմանք տեսանք հոն փոխադրուած Սիսակեան ընկերութեան ընթերցարանի բոլոր գոյքերն ու գիրքերն :

Սիսակեան ընկերութիւնը կազմաւորուելէ յետոյ , անոր բոլոր գոյքերն Ազգ. վարժարանի փոխադրուեցան , ուր կը մնային իբր Ազգ. վարժարանի սեփականութիւն , կամ իբր աւանդ , մինչեւ որ Սիսակեան ընկերութիւնը վերակազմուէր : Հետեւաբար մեզ զարմանք պատճառեց , իբր տեսանք գրանդ կուսակցական ընթերցարանի մը մէջ , որ շարունակութիւնը չէր Սիսակեանին :

Արդ կը հարցնենք հոյադարձաբար թէ , Սիսակեան ընկերութեան գոյքերն ու գրքերը ո՞վ տուած է նորահաստատ ընթերցարանին , որ կուսակցական անուն մը կը կրէ . և ի՞նչ իրաւամբ , քանի որ Սիսակեան ընկերութեան անգամներն ոչ ընդհ. ժողով գումարուած է և ոչ ալ այդպիսի որոշում մը տրուած :

Սիսակեան Ընկ. Անդամ մը վառնա , 14/27 Յունւար 1902

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՖԻԱ , 10 Յունւար

(Շար. Անիս. Բիւլեն եւ վերջ)

Օրուան խնդիր է այժմ մեծ զեղծում մը որ ծայր տուաւ միջոցներ օր առաջ և կը թուի թէ մեծ յայտնութիւններ երեւան պիտի գտնուին թղթագրութեան (կէր պովա մարքա) մեծ քանակութիւն մը , ամբողջ մէկ լէվոնց տեսակէն՝ կը ծախուի եղի , գաղտնապէս կարգ մը մարդերէ որոնց մէջ Նըշանաւոր և կառավարական անձեր ալ կը գտնուին : Թղթագրութեանը կըսուի թէ կեղծ չեն ալ իսկական , ուրեմն ու եւ կերպով գողցուած են պետական տպարանէն և քանակութիւնը կը հաշուի 10,000,000 ֆր. եւ չէ թէ միայն Սօֆիա , այլ Պուլկարիոյ բոլոր գաւառներու մէջ մասնաւոր գաղտնի գործակալներու ձեռքով 0/0 10 , 20 և մինչեւ 40 զեղզով կը ծախեն եղեր տարիներէ ի վեր : Բնական է թէ թղթագրութեանը իսկական ըլլալուն պատճառաւ մեծ յաջողութիւն ունեցած են իրենց օձիքը ձեռք չը տալով այսչափ երկար ժամանակ իրենց չարանիք զահագործումը շարունակելու , բայց «չիք ինչ ծածուկ որ

ոչ յայտնեցին : Ժամանակէ մը ի վեր նկատուած էր թէ թղթագրութեանը վաճառումը փոխանակ տարուէ տարի աւելնալու սկսած էր նուազիլ , մինչեւ այն աստիճան որ 1901 ապրիլ 1էն ցոյսօր պետական գանձարանը գրեթէ 1 լէվոնց թղթագրութեան չէ ծախած . մինչդեռ հրապարակը 1 լէվոնց թղթագրութեանը միջոցով այնչափ ողողուած է որ նշանակալին գատարանին ներքեւ թղթագրութեան ծախողներ սկսած էին 1 լէվոնց 80 սանթիմի ծախել : Այս երեւոյթը զարմացման և շուարման մէջ թողուցած էր ոստիկանութիւնը , բայց վերջապէս արգարութիւնը թէպէտ երբեմն ուշ բայց միշտ յաղթական է : Ամենէն առաջ ձեռքաւորուեցաւ Տ. Քարանով , որ կը կարծուի թէ զխաւորն է , տակէ զատ ինձեկներ մը թոմա Հօրնէր , կեօրկի Սապուճիքի և Տր. Տիգօ Խօվէկ որ նախորդ քաղաքապետական ժողովոյ անդամ էր և փաստաբան ու խմբագիր , ուրիշ շատ և շատեր ձեռքակալուեցան որոց բոլորին տուններ խուզարկուեցան , բայց դեռ նշանակելի բան մը երեւան ելած չէ՝ և թղթագրութեանը միջոցներն ու գտնուիլը կամ բուն զեղծման ինչպէս և ո՞ր պարագաներու տակ ծագում տունիլը դեռ յայտնի չէ : Դատական հետապնդութիւնը կը շարունակուի շատ խիստ կերպով և կը յուսացուի թէ մօտ օրէն ամեն բան պիտի յայտնուի և բոլոր յանցաւորները արգարութեան ճանկը պիտի իյնան :

Վերջին պահին կը ծանուցուի թէ Տր. Տիգօ Խօվէկի տունը խուզարկուած ատեն խնդրոյ վրայ բաւական գաղտնիքներ պարունակող նամակ մը գտնուեց , նաեւ թղթագրութեան ծախիլու մեքենայ մը և գունաւոր միւսն , գտնուած է ցոյցով մը ուր օր առաջ ծախուած թղթագրութեանը հաշիւը գրուած է եղեր : Ասկէ կը հետեւի թէ իսկականէն զատ կեղծեր ալ չիլուած են : Ասոնց ներեւան հիշելի լսածին պէս Տր. Խօվէկի եւ իւր զինքի իրրորդ ու շատ թղթին մէջ , ուր բանտարկուած էր , ինքզինք կը թունաւորէ և քիչ յետոյ կը մեռնի : Քննութիւն կատարուելով կը հասկցուի թէ դեռ վեց ամիս առաջ իր վրայ պատրաստ թոյն կը կրէ եղեր : Քրեանով բոսած է հարցաքննիչ գատարանին թէ ինք թղթագրութեանը Տր. Խօվէկէն առած է , նախարարութիւն , ոստիկանութիւն գատարան պաշտօնատարք մեծ շարժման մէջ են :

Մեր ազգային վիճակը ներկայիս շատ անդորր կերպարանք մը ունի : Փառք Աստուծոյ այ խոռվութիւն չունինք , երկպառակութիւն չը կայ մէջիւրիս . նոր տարիէն առաջ Գատրիարքարանէ նոր թաղ խորհրդոյ ընտրութեան հը-

րահանգ եկած էր Մանգալուի չոր. ընտրողական ժողովը կազմուած է և թերեւս 8-10 օր յետոյ ընտրութիւնը կատարուի։ Մեր փափաքն է որ բոլոր ազգայինք փութան պատասխանել ընտրութեան հրաւերին և առանց չփութեան տեղի տալու վրջ գտնայ մեզ համար կարեւոր այս գործողութիւնը, Բայց միայն ասով չը լինար մեր ընկիւքը։ Եթէ մենք թերեւանք մեր ազգային պարտականութիւնը կատարելու մէջ, կամ պարզ բառով, եթէ մեր ամատուրքերը, որ միակ եկամուտը կը կազմեն մեր եկեղեցւոյն և վարժարանին, կանոնաւոր ու յարմար չը գծարկէր դարձեալ պիտի կազմէր մեր գործերը և դարձեալ նոյն վիճակին ենթարկուինք որպիսին էր անցեալ տարի։

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք մասնաւորապէս Առժամեայ Խնամակալութեան երկու պատուարժան անդամաց, որք պէտք եղած ջանքը և աջակցութիւնը նուիրեցին Եկեղեցւոյ պայծառութեան համար և Ս. Ծրնդեան տոներու ատեն իրենց հոգաւորութիւնը անպակաս օրին։

ԱՐՄԵՆԱԿ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՅՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր

Շ... Ի 377 թիւին մէջ «հուր եկի արկանել յերկիր» վերնագրին տակ Տիգրան Վարդանանէ գրուած և Արտոն Շահրէկեանէ մը ստորագրուած գրութիւնը մը կարգացինք, որուն մէջ խորհրդոյն նկատմամբ եղած կարգ մը զրպարտութիւններու կարեւորութիւնը տալով պատասխանել թէպէտեւ չէր արժէր, բայց միմիայն քանի մը մութ կէտերը պարզելու, թէ անոր ասոր պատասխանութիւնը երկուսն հանելու, եւ թէ յիշեալ պարտին պաշտպանած նախորդ թաղ խորհրդոյ տեսակ մը զեղծումները հրապարակաւ յայտնել պատեն առիթ համարելով, սոյն պաշտոնակաւ գրութիւնն պատ. թերթի մասակայ թիւերէն միոյն մէջ զետեղելիք կը խնդրենք։

Ա. «Պատ. Թաղ. Խորհրդոյ լուրջ գործունէութեան շնորհիւ, որ թէ նախորդ թաղականութեան 6-700 ֆր. ի չափ պարտքը վճարելով հանդերձ, եկեղեցիին պատը ու տախտակամածը նորոգեց, եւ թէ արտ մը գնեց եւ 600 ֆր. ի մօտ գումար մըն ալ աւելցուց» ըսած է մեր պարտ թղթակիցը։ Մինչդեռ խնդիրը բոլորովին իրականութենէ զուրկ է։ Նախորդ թաղ. Խորհրդը Նալպանտեան Գեորգ վարդապետին անվճար մնացած երկու ամսականներէն 140 ֆր. ի պարտք ձգեց, բայց ասոր փոխարէն վարձքի տրուած 78 արտավար արտերուն աւմառը հաւաքուած վարձքերուն հետ 3-400 ֆրանքնոց քանի մը ամիսէն գանձուելիք ընկալագիրներ ալ ձգեց. անոնք իրենց ժամանակին տրուած արտերուն վարձքին հետ երկու տարուանը միասին գանձելէ զատ, ձեռ-

քերնին աւելի դրամ անցնելու նպատակով, գալիք տարուան չեքիքի համար 36 արտավարարտ մըն ալ աման գինով տալով, այդ գրամները եւս ձեռքերնին անցընելու ածապարեցին. մինչ ատոր մօտերը գտնուող աւելի վարնոց արտերուն իւրաքանչիւր արտավարը 5-6 ֆրանք աւելի տրուած ըլլալը կրնանք փաստելով հաստատել։ Եկեղեցիին պատը ու տախտակամածը նորոգելին իրաւ է, իսկ արտ մը գնած ըլլալին բոլորովին սուտ է. թէպէտեւ արտ մը աւելցուած է 25. ֆր. եւս կանխավճար տուած էին երկու ամիսէն առնելու պայմանով, սակայն չեն կրցած առնել եւ պայմանագրով լրանալով տրուած գրամն ալ փնացած է։ 600 ֆրանքի մօտ գումար մը աւելցնելին իրաւ է, որովհետեւ ինչպէս որ վերեւ չըցինք երկր տարուան հասոյթ ձեռքերնին անցուցին։ Բայց տեսէք թէ այդ գրամն ալ ի՞նչ կերպով իւրացնելով, ոչ մի չնչիւն դրամ խորհրդոյն չը յանձնել կը մատնէ։ Թաղականութեան ընտրութիւնը սեպ. 17ին կատարուելով, եւ ընտրութեանց տեղեկագրերը պէտք եղած տեղեր զրկուելով արդիւնքին կրպատուէր. ամիս ու կէսէ յետոյ կառավարութիւնը ընտրութիւնը կը վաւերացնէ, Այցելու հովիւ Գեոր. Բ. Մ. Վ. Պաղճեանի կողմանէ թաղականութեան վերաբերեալ գոյքերը յանձնելին կ'ազդարարուի, բայց ասոնք հաշիւները տակաւին պատրաստած չըլլալին առաքելով, քանի մը օր եւս պայմանագրով կը պահանջեն. այս միջոցին մինակ մնացած երկու անգամներ Մանուկ Փափազեան եւ կառավար Մ. Յարութիւնեան աղաներ մէջեքին որոշում ընելով, դրամը կարպետ Մ. Յարութիւն կանէ երկու տարուան համար 8 0/0 տոկոսով, որպէս զի նոր թաղ. Խորհուրդը դրամի եւ եկամուտներու չգոյութեան պատճառաւ անձուկ կացութեան մէջ մնալով հրաժարելու պարտաւորուի։ Բայց չենք գիտեր ո՞ր օրէնքի յանդէմ այս գործին կը ձեռնարկեն, նախ չեն գիտեր թէ ազգային դրամ երբեք չի արուիր մասնաւոր անձի մը բացի գրամատուէնէն, ալ եթէ աւելորդ է երկրորդ մասնաւորութիւնը կորսնցուցած խորհուրդը մը ինչպէս կ'ընայ ու եւ որոշում տալ, մասնաւոր այն պիտի ժամանակի մը որ բոլոր գործառնութիւնները յանձնելին իրենց ազգարարուած է, եւ գրամատուէն ալ երկուքէն մին կ'ըլլայ. երբորդ ո՞ր օրէնք կը տրամադրէ երկու տարուան համար պօսն կ'ընէ։ Ըսվեցողք թող դատեն անոնց լուրջ գործունէութիւնը (°°°)։

Բ. «Ընտրութեանց եղանակին մէջ զեղծումներ գործուած, ապօրինի եղած է» կ'ըսէ քանի որ իրենք զեղծմանց հանգեպ զիմուններ ըրած են պէտք եղած տեղեր, ինչպէս կ'ըլլայ որ թէ նախարարութիւնը եւ թէ Ազգային Պատրիարքարանը կը վաւերացնեն նորընտիր թաղ. Խորհուրդը ատոնց կողմանէ եղած առաքելութիւնները անսեղ չեպտելով։

Գ. Դպրոցին կարասիներուն գողցուած ըլլալը բացարձակ սուտ է, թող հաստատէ Պ. յօդուածագիրը թէ գոյքերը ո՞ւր տարուեր են եկեղեցիէն դուրս. միայն թէ գաղտնի գաղափր ժամանակ հակող պաշտօնէութիւնը մը չըլլալուն պատճառաւ, պէտքը զգալի եղող կարգ մը բարենորոգումներ աչքէ վրիպած ըլլալուն, կրթական տեսչի հրամանով դպրոցին առժամանակեայ փակման ենթակայ ըլլալը յարմար առիթ սեպելով, վերի կզմինտները

յարգարելու եւ սրահին անցեալ տարուանէ աւելած ներկերը նորոգելու համար մեկացուած էր։ Բրիսթաֆին Հիլ ըմբռնեան քահանայն կանչելով բանալին պահանջելը, յետոյ թաղականութեան բանաւարկութիւնը եւ այցելու հովիւ Գեոր. Բ. Մ. Վ. Պաղճեանի յանդիմանութիւնը կատարեալ ստախոսութիւն եւ անամօթ զրպարտութիւններ են. որոց մասին արդէն Պ. Քերովքէ Ոսկերիչեան գրած էր. մենք եւս կը հաստատենք։

Ի դիմաց Թաղ-Բաղարճքի թաղ. Խորհրդոյ

Ատնապար Ստեփանյան
Դ. Դեորգեան Ս. Յ. Մանալեան
Թ. Բաղարճք, 31 Դեկտ. 1901

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ՅԻՄԱՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Մօրնիկի Հիդերի թղթակիցը Յունուար 21 թուականաւ Բարի զէն կիմացնէ հետեւեալը.

«Յրանսական խորհրդարանին մէջ, արտաքին գործոց նախարարութեան պիւտճէին վրայ բացուած վիճաբանութեան առթիւ, ջանք մը եղաւ հայկական խնդիրը կրկին արժարձելու Արեւելքի ընդհանուր կացութեան վրայ եղած հարցապնդմամբ մը։

Յեղափոխական Ընկերավարական երեսփոխանը, Մ. Ռուանէ, փափաք յայտնեց զիտնուել թէ՛ երբ Յրանսական կառավարութիւնը նուաբաժին մը զրկեց Միտիլին վճիռ տալիս, եղող դրամական եւ ալ խնդիրներու կարգադրմանը ուժ տալու, ինչու համար ո՛ր է ձեռնարկ մը չըրաւ Ապտիւլ-Համիտի մօտ, որ քաղաքակրթութեան հակառակ կը շարունակէ իր ոճիւններու շարքը հինգ տարիներէ ի վեր հայաստանի մէջ։

«Նախարարը, Մ. Տէլքասէ, պատասխանեց թէ Միտիլինի զրաւումը մասնաւոր եւ ազգային շահոց պաշտպանութեան համար ի գործ դրուեցաւ. ուստի անկարելի էր Յրանսայի Հայկական խնդիրը յուզել առանց կանխաւ խորհրդակցելու միւս պիտութեանց հետ։ Այդ տեսակ միջամտութիւն մը, աւելցուց նախարարը, կրնար յառաջ բերել բազմաթիւ նուրբ խնդիրներ։ Այսպիսի միջամտութիւն մը անկարելի էր, որովհետեւ այս վարկեանիս ու է խնդիր չկայ Սուլթանին մասնաւոր իրաւանց միջամտութիւն ընելու։ (°)

«Մ. Ռուանէ այն ատեն առաջարկեց որոշում մը, որպէս զի կառավարութիւնը Երոսպայի ու շաղրութիւնը հրաւիրէ Սուլթանին հանդէպ իր խոստումները բռնաբարելու մասին։ Երբորդ այդ կերպով բանաձեւ մը չընդունեց, բայց սա կէտը նկատելի էր որ, Մ. Տէլքասէի յայտարարութիւնը ժողովին 515 քուէարկողներէն միմիայն 45 քուէի առաւելութեամբ հաւանութիւն գտաւ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն Հայոց վեհ. կաթողիկոսը կոնգրակ մը զրկելով Ամեն. Տ. Գեորգ Եպիսկոպոս Երեցեանի, ջատագոված է անոր մինչեւ ցարդ ցոյց տուած պարտաճանաչութիւնը ու գնահատելի ծառայութիւնները, զորս մասնացած է ալ և ալ կարեւոր պաշտօններու մէջ։ Նորին Ս. Օծուլթիւնը յորդոր կը կարգայ իր կոնգրակաւ որ Երեցեան Սրբազան Եպիսկոպոս կաթողիկոսութիւնը ստանձնէ, որուն համար ամէն ձեռք ու արժանիք իր մէջ չեն պակտիր։

— Երկրիկոյ թեմերէն խնդրած էին Պատրիարքարանէ որ փութացնէ պաշտօնական գործողութիւնները և օր առաջ ճամբու զնէ նորընտիր Դաթիկոսը գէպի կրկնելու, ուր երեսի վրայ մնացած են կարգ մը տեղային գործեր։ Պատրիարքը վարչական ժողովոյ կողմէ պատասխանեց թէ ընտրութիւնը օրինաւոր դատուած ու վաւերացուած է, իսկ ընտրեալը այդ կարեւոր պաշտօնին համար ամեն ձեռք ու առաւելութիւն կը վայելէ. նաեւ հարկ եղած միջոցները ի գործ կը դրուին քննարկելու արամադրութիւնը փոխելու յօգուտ կրկնելու Աթոռին։ Հակառակ պարտադրոյն որոշուած է ընդհուպ կարեւորը տնօրինել։

— Ուրախեցնելու Արհեստանոցի վերածելու համար մեր անցեալ թուով հրատարակած Պատրիարքական շրջաբերականը իր արդիւնքը սկսած է ունենալ Պոլսոյ մէջ, ուր բարեհամբաւ օրերդ մը տրկններու մէջ արդէն հանգաւակութեան ձեռնարկած է, և սոյն նպատակաւ նուէրներ սկսած են հասնել Պատրիարքարան։

— Կրօն. Ժողովոյ որոշման համեմատ, Ուսումնական խորհուրդը բոլոր թաղային կամ ազգային վարժարաններու տնօրինութեանց հրահանգ զրկեց, որ ասկէ յետոյ, շաբաթը ժամ մը, հայկական ձայնագրութեան դաս աւանդուի վարժարանաց մէջ. այս մասին ընդհանուր ծրագիր մըն ալ պատրաստուած է։

— Ստացանք Բանասերի երկրորդ հատորի Դ. պրակը։ Պարտականութիւնն է։

Ա. «Քաղկեդոնական ժողով և Հայաստանեայց Եկեղեցի» գրուած Սուքիաս վրդ. Պարոնեանէ։

Բ. Լեզուաբանական. «Պուր» բառի հոստազօտութիւնը։

Գ. Մատենախոսական. Կ. Բասմալեանէ գրուած։

Դ. Մատենադրական. «Երբայցեք Յիսուսի տէր կեցին»։

Ե. «Թուղթ Պիղատոսի առ Տիբերիոս կայսրն»։

— Իսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ քահանայից քանձանակը գողցուեր է, մէջը 200 զրուշէ աւելի դրամ կայ եղիր։

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԻՔԻԱ

Թանգը Սթանպոլ մուխպիի Սօֆիա թարգմի իւն լուսնար 23 թարիսի ամիտեքի թէլէկրաֆը վերմիշ տիր :

«Վանտան ալընան համատիւէրէ պինտէն, էրմէնիւէր վէ Բիւրտէր պէնիւտէ շէտիտ գաղկուլար փոգու պուլմաշ, Չօգ էօլիւէր վէ հարէլիւէր տիւշմիւշէր : Ասքէրէր միւտախէլէ իթմիշ տիրէր :

«Գօսօվա վիւտիթի տախիլիւտէ Գօզանտա թիւրք տաքէրէր վէ պուլկար գօմիթէլէր պէնիւտէ շէտիտ պիր գաղկու փոգու պուլմաշ տըր :»

—Միւ Սթանպոլ սէրպէտտ պըրտալըմըշ օլտըղընա տայիր պիր գաշ հաֆթա էվէլ վերիւն հաւաթիսին էսասըղ օլտըղ պիւտալէրէր անլաշըմըշ տըր : Պուտէֆա Սթանպոլտան վերիւն պիր թէլէկրաֆա պինտէն, մէրգուլմէ Սթանպոլ Սթանպոլ սէֆարէթի շին սէր թէրմիւտէնա պիր մէրթուպ հազուպ, քէնտիսինին վէ ըէֆիգէսի մատամ Սթիլքանըն վէ պուլմաշ Ենի տօղմուշ օլտն մախտուլմըն սաղ սէլիմ օլտրպուրընը պիւտիւրմիշ տիր : Մէղպուրէլէրին հազընէն սէրպէսթ պըրտալըմադարը մէմուլ օլտըլօր : զիրա անլէրի թուլմուշ օլտն շապիւր զայրը 25000 լիրա թալէպինտէն վաղ կէչէրէք, Միւ ըՍթան Իշին Ամիրիդատա թօլտնըլան 12000 լիրա գատար պիր մէպուղ իւն գանմադտա ըմըշար : պուպապտէ Ենիտէն մուխպէրէ պաշանըմըշ :

—Պապը Ալի Պանգ Օթօմանըն վասիթասը իւն 2,500,000 լիրա պիր իսթիգրաղ իտուպտէ : Ասաստօյա, Արմաթրօնա, Լօրէնտօյա վէ թուպինիյէ օլտն պօրճարընը վէ հարպիյէ նէզարէթինին իգթիգալարընը թէսվիյէ իտէճէք օլտըղը, վէ պուլ մէպալը թէմին Իշին ըուս թաղմիւտաթընըն թէլէսիւրաթտա գալան թաղսիտէրինն թախիսի օլտնմուշ վաւիտաթըն թէմինաթ կէօսթէրիլէճէկի Սթանպոլտան պիւտիւրիւմիշ տիր :

Բէզա Պանգ Օթօման՝ Հիճաղ չըմէնտըֆէրի Իշին 1,500,000 լիրա էօտիւնճ վէրուպ, պիրինճի տէրէճէլտէ թէմինաթ իսթիհասալ իտէճէկի պիւտիւրիւտիւր :

Գօննա—Պաղտտ չըմէնտըֆէր խաթթընըն իսթիյաղը ալմանլըր տան միւթէլէքի Աստօյա չըմէնտըֆէր չիրքէթինէ վէրիւտիկինի վէ պուլ պապտէ իրատէնին սուտուր իթտիկինի պուլտան էվէլ Եաղմըշ ըտըգ : Թան կաղէթասընըն Սթանպոլտան գապուլ իթտիկի պիր մէթուպ մէզքիւր խաթթ իշին ամիտեքի թաֆսիլաթը վէրիւր :

Գօննա տան Պաղտտան վէ տէնիզ քէնարընա գատար հարլաճաղ չըմէնտըֆէրին ուգուլըրը չուպէլէրի իւն պէրապէր՝ 2500 քիլօմէթրօյա պալիզ օլտնաղ : Խաթթ Գօննա տան չըգուպ, կիլիկիանըն Տօրոս տաղարընը կէչէրէք Ատանայա Ենիթէճէք, գալմէն Ատատա Մէրսին իւն չըմէնտըֆէրէ պաղը տըր : Ատանա տան Ճիհան նէհրինին օվտընը կէչէրէք, կիւպուր տաղարտան տօլաշարաղ Գաղանլըզ, Բիւլիս վէ թէլէլապէլէ ուղրայաճաղ : պուլտան պիր չուպէ ալրուպ հալէպէ կիտէճէք տիր, պուլ չուպէ 60 քիլօմէթրօ հէսապ օլտըլօր : Պէօլիք խաթթ թէլէլապէլէն շարգա տօղրու իւլիւլիւպ, Եփրատ (Մուրատ) նէհրինի կէչէրէք վէ Պիրէճիքտէն 20 քիլօմէթրօ իրաղ պուլմաշ պիր Եօղթա տան, Եփրատտան Հարուան, Բալէ-Ալի վէ Նիւան Պէլիք գատար ուգուտըգտան սօրա Մուսուլ Եօլունը թուլաճաղ : պուլ Եօլ իւզէրինտէ Ուրֆայա պիր չուպէ պըրաղաճաղ տըր : Մուսուլտան կէչուպ, Տիգրիս նէհրի սահրիլիւտէն թէլիլի վէ Սուտիճէյէ կիտէճէք, պուլտան թէլէրար Աճէմիստան սիւօլընա Եաղըն Հանէքէն պիր չուպէ ամթաճաղ : Ասըլ խաթթ յիւտիճէտէն Պաղտտա կիտէճէք, օրատան Տիգրիսի կէչէճէք Բէրպէլա, Նէճէֆ, Չիւպէրի վէ Պասրայա գատար թէմիտ օլտնաճաղ : Սուրաթ գաթարը 55 սալթ վարիլընա Սթանպոլտան Պաղտտա Ենիթէճէք տիր : Շիրքէթ պուլթին խաթթըն հէր իքի թարաֆընտա Ենիթիւրմիշէր քիլօմէթրօ մէսաֆէլէլտէ պուլմաշ մատտէնլէր քէնտիսի իշլէթմէք սէլահրիլիւտէ հայիզ օլտնաղ տըր : վէ ումուլ խաթթըն պօյունտա ըրէթմիտ ֆապրիգալարը վէ թուղլա ֆուլուրիւրը թէսիս իտէպիլէճէք :

Իշպուլ մուհիմ իսթիյաղը պալրատէ Ալման չըրքէթինէ թէվտի օլտնտըղընտան տօլայը՝ Սթանպոլ ալման Ելիսի կէչէն ճուլմա՝ սէլամըզ ալալիստան սօսիւր : Սուլթանըն հուլուրընա չըգուպ, պէյանը թէլէքքիւր իթմիշ տիր :

ԹՐԱՆՍՎԱՆ

Թանգըն իսպարաթընա կէօրէ Պէրլէրին պիր գըսմը մուհալէպէլէ նիհայէթ վէրիլմէսինի թէնէրալ Պօթայա թէքիթ իթմիշ : ֆաղաթ պուլտուլէ Պէրլէրին Եաղընտա թէլէքի սիւրահ իտէճէկինէ իւմիտ օլտնաղ տէմէլէ պէրապէր, ինկիլիզ օրտուսընը ամլարա վէ Ենի թապուրարա իգթիգալը օլտըղընը իւլէլ իտէյօր :

—Ճէնուպի Աֆրիգատան ալընան պիր ըտըրթ՝ Պէրլէրին էլան մէվճուտ 60000 թիւֆէնկ, բէք չօղ լէվաղիմաթ վէ գալիլէ

Չուլթանապէրկ տաղարընտա հըֆա իթմիշ օլտըղընըն պիւտիւրմիշ տիր :

—Մէսմուաթա կէօրէ, Հօլանտա վիւքէլա բէլիսի Տօք Գօնիքէր Պէրլէր միւթէլէսի իշին պուրտա Պէրլիլէ կիլիկի օլտնաղ : Եաղընտա Լօրտ Բօղպէլի իւն (Ինկիլիթէրանըն իպէրալ ըտըրթիսի բէլիլէրինտէն) կէօրիւշէճէք իթմիշ :

ՍԵՐՊԻԱ

Գրուլ Ալէքսանտրօ վէ Գրուլիցա Տրակայա գարըն օլտն ֆըրգա վիլէնա կաղէթալարը վասիթասը իւլէ՝ Գրալըն թաճթ թէլէք իտուպ, մըգտարը քիւտի մատալէ պիր թարաֆա չէքիլմէլէ բուպի օլտըղընը նէշը ու իւլան իթմիլէր : ֆաղաթ պուլ նէշրիւթ Պէլկրատտա նէֆրէթ հասըլ իթմի, վէ բէսմէն թէլէքիլ օլտնտը :

Շալանը էմիլիթ մէնպալարտան անլաշըլտըղը իւլիլէ, Գրուլ Ալէքսանտր հիւքիւմտարըրըրտ տէվամ իթմէքտէն մատտա, պիր էվալտը տօղապիլէճէկինէ իւմիտ վար օլտըղընտան տաճա պիր գալսէնէ պէլէլէճէք, վէ աղսի օլտնաղ էվէր քէնտի տարը էվալտը թէվէլիւտ իթմէլ իսէ, ֆէսիսի նիքնահ իթմէքթիլին, զէլիւտա հաղընը՝ Սգուպշինա իւլ պիլիս թիւարէ, Սիւպիւայա ֆաիւտը վէ Բուսիանըն թէվէլտուհընը գալանըն օլտն պիր գաթա թէվտի իտէճէք տիր :

ԲՈՒՄԻԱ ՎԷ ՊԱԼԳԱՆ

Բուսիա վէ Պալգան էյալէթ լէրի պէնիւտէ թիւճարըղը վէ միւնասէպաթը սաիլէրի ալթըրմաղ վէ գուվվէթէլտիլմէք Զիլին Արշիտիւր Ալէքսանտր Միլիսայիւլիլին ընյասէթի ալթընտա Բէլթէրպուրիկա պիր գօթիսիս թէլէքիլ օլտնմըշ օլտալէ, օլ պապտէլաղըմ օլտն թէլտըղըլաթա վէ մուլապէրաթա պաշալմըշ տըր : Իշպուլ մաքսէտէ պուլտէն, մէզքիւր գօմիսիսնա իշթիւրաք իթմէք իշին, Պէլկրատտան պիր հէլէթի մուրախասէ կէօնտէրիլմիշ տիր : Տիկէր Պալգան հիւքիւմէթլէրին տալիս, պա խուսուս Պուլկարիանըն, մէզքիւն գօմիսիսնա իշթիւրաք իթմէսի էլէլէմ տիր :

ԱՃԷՄԻՍՏԱՆ

Ինկիլիզ Բարլըմանընտա Լօրտ Գրէնպուրի Աճէմիստան իշին չուպէլանթաթա պուլիւտը : «Ինկիլիթէրա Աճէմիստանըն հայը հաղընը իւլըն տէվամ իթմէսինի ալրու իտէր, Ի կիլիթէրանըն մաղսէտի Աճէմիստանը քէնտի չիմտիքի ալաղիլէրիլ իւլ թէվամ սաղլամաղ վէ օնուլ թէրաղըղընա

Եարտըմ իթմէք տիր : ֆաղաթ օրատա պիլիմ թիւճարէթէ էն Եիւքէք տէրէճէտէ պուլընան մէվըմըղը թէլէք իտէլէլիլ : Բուսիսի իւլէ քէլա սալիւր տէվէթլէրիլ տօսթ գալմաղ իսթէրիկ, Գալաթ աճէմիսթիլէլէ թանըմըշ օլտըղըմըղ հաղարընըղ տալա թէլէք իտէլէլիլ :

Լօրտըն պուլ նուլթըր Բուսլաբըն Աճէմ քէօրֆէլիւտէ պաղը իսթէլէլէր էլտէ իթմէկէ չալըշտըղարընա գարըն պիր թէլէտիտ տիր :

ԻՐԱՆՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Ա. -Լն-Շուլա — Չինք կարող անարթէք պոռնուքնըրու աթիւ քանի մը սիւնակներ մէկէն զոհել : ուստի խիստ կարճ պատասխանով մը միայն վերջ տուէք ձեր վէճին : Նաւէ չինք ներքը բնաւ որ տեղւոյս խայտառակագրին անուըն յիշէք ձեր պատասխանին մէջ :

Տ. Յ. Բիւրս. -Ալմարյար — 10 ֆր. գապուլ իթմիլէ :

Տ. Մ. Բ. -Բազարյը — Ստացանք 14 ֆր. :

Մեր նորագոյն քաժանորդները ուղղակի խմբագրութեանս ղրկելու են իրենց քաժանորդները :

ԹԻԻՐԻՔԻԱ

ՉՈՒՆԻՆԷ			
Պոլիսիս	Վալիսիս	Չուլիսիս	Չուլիսիս
Վալիսիս լիպ. 49.53 հըթ.	7. — / 7.40	Չուլիսիս լիպ. 48-58 հըթ.	7. — / 10.20
ՍԵՐՊԻԱ			
Վալիսիս 100 քիլօ	9.56/9.60	Չուլիսիս 35-45 լիպ. հըթ.	5.70/6. —
ԵՆԻԼԻԿ			
Չուլիսիս 5.20/5.60		Չուլիսիս 100 քիլօ	15. — / 22. —
ՉՈՒՆԻՆԷ			
Չուլիսիս 54-58 հըթ.	7. — / 8. —	Վալիսիս 100 քիլօ	9.30/9.60
ՍԵՐՊԻԱ			
Վալիսիս 100-150 արապա կէլմէքտէ տիր, Վալիսիս 50-55 :		Վալիսիս մուլմէլէսի ալթուր ֆըրանքլէ, արապա կիւմիւլէ : Նաբօլէս 22/50 հիսապը իւլէ :	

ՍՍՐԱՆԻՅԷ
Նաբօլէս 22 ֆրանք 60 սանթ,
Օսմ. լիրա 22.90 ալթուր ֆրանք

ՊԱՆԳՈՒՆԷ	
Վարնա Բիւստանընտա պաղգալիլէ մալիլէրին պուլ կիւնքի ֆիլաթը, ալթուր ֆրանք իւլէ :	
Գուլիլէ	1.60/11.80
Շէֆէր Բօման, Նէմցէ	53
» (Բէսմէ) սանտըղ	28. —
Բիւրիւն ճարտն չուլալը	35-38
« Ֆիլիպէ »	34. —
« Ինկիլիկ »	27. —
« Բիգօն »	45.48
ԿԱՉ Սանտըղը	6.60
Չէթիւն ԵԱՂԸ քիլօ	— .80/1. —
ԳՈՒՐՈՒ ԻԻՋԻՄ	— .32

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна